www.printo.it/pediatric-rheumatology/AM/intro

ՈՒՌՈՒՑՔԻ ՆԵԿՐՈԶԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՆԻ ԸՆԿԱԼԻՉԻ ՀԵՏ ԱՍՈՑԱԾՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ (TRAPS) ԿԱՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՌԼԱՆԴԱԿԱՆ ՏԵՆԴ

Տարբերակ 2016

3. ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔԸ

3.1 Ինչպե՞ս կարող է հիվանդությունը ազդել երեխայի և նրա ընտանիքի անդամների առօրյա կյանքի վրա:

Հաճախակի և երկարատև նոպաները խանգարում են նորմալ ընտանեկան կյանքը և կարող են ազդել հիվանդի կամ նրա ծնողների աշխատանքի վրա: Հաճախ ճիշտ ախտորոշումը զգալի ուշացումով է դրվում, որը առաջացնում է ծնողների անհանգստությունը և երբեմն կատարվում են ոչ անհրաժեշտ բժշկական միջամտություններ:

3.2 Ի՞նչ կասեք դպրոցի մասին:

Հաճախակի նոպաները կարող են դպրոց հաճախելու համար խնդիրների պատճառ դառնալ: Արդյունավետ բուժումը կարող է դպրոցի բացակայությունները նվազեցնել: Ուսուցիչները պետք է տեղյակ լինեն հիվանդության մասին, և ինչ պետք է անեն, եթե նոպան սկսվի դպրոցում:

3.3 Ի՞նչ կասեք սպորտի մասին:

Սպորտի համար սահմանափակումներ չկան: Սակայն մրցումներից և փորձերից հաճախակի բացակայությունը կարող է դժվարեցնել մրցակցային խմբային սպորտաձևերին մասնակցելը:

3.4 Ի՞նչ կասեք սննդակարգի մասին:
Չկա որևէ յուրահատուկ սննդակարգ:

3.5 Կարո՞ղ է կլիման ազդել հիվանդության ընթացքի վրա:
Ոչ, չի կարող:

3.6 Կարո՞ղ է երեխան պատվաստվել:
Այո, երեխան կարող է և պետք է պատվաստվի, նույնիսկ եթե այս ձևով խթանվում է տենդի գրոհը: Մասնավորապես, եթե երեխան ստանում է կորտիկոստերոիդներ կամ կենսաբանական ագենտներ, պատվաստումները անհրաժեշտ են հնարավոր ինֆեկցիաները կանխարգելելու համար:

3.7 Ի՞նչ կասեք սեռական կյանքի, հղիության և հակաբեղմնավորիչների մասին:
TRAPS-ով հիվանդները կարող են ունենալ նորմալ սեռական կյանք և կարող են ունենալ իրենց երեխաները: Սակայն, նրանք պետք է իմանան, որ հավանականությունը 50% է, որ իրենց երեխաները կարող են ունենալ այս հիվանդությունը: Գենետիկ խորհրդատվության ընթացքում պետք է առաջարկվի քննարկել երեխաների և ընտանիքների հարցը: